

Ակալայի համալսարան, Բսպանիա

Ուսումնառության ժամկետը՝ **5 ամիս**

Ժամանակաշրջանը՝ **2019-2020 ուս. տարի, 1-ին կիսամյակ**

Ուսումնառության ոլորտը, աստիճանը և լեզուն՝

- **շինարարություն, բակալավրիատ, իսպաներեն (առնվազն A2 մակարդակ) (կարող են դիմել 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերի ուսանողները)**
- **ինֆորմատիկա, հաշվողական տեխնիկա և կառավարում, անգլերեն (առնվազն B2 մակարդակ) (կարող են դիմել 2-րդ կուրսի ուսանողները)**

Ֆինանսավորումը՝ **800 եվրո ամսական կրթաթոշակ, 820 եվրո ճանապարհածախս**

Մրցույթին մասնակցելու նպատակով անհրաժեշտ է հետևյալ փաստաթղթերն **անգլերեն լեզվով** մինչև **2019թ. մարտի 14-ը** ներկայացնել ՃՇՀԱՀ միջազգային կապերի վարչություն (2212 սենյակ) իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել international@nuaca.am էլ. հասցեին:

- Ինքնակենսագրություն (EUROPASS ձևաչափով)
- Առաջադիմության վերաբերյալ տեղեկանք (ՄՈԳ)
- Մոտիվացիոն նամակ

"Շինարարություն" մասնագիտությամբ սովորող ուսանողները ներկայացնում են

- Իսպաներենի իմացության հավաստագիր (առնվազն A2 մակարդակ), միաժամանակ պահանջվում է անգլերենի իմացություն (առնվազն A2 մակարդակ)

"Ինֆորմատիկա, հաշվողական տեխնիկա և կառավարում" մասնագիտությամբ սովորող ուսանողները ներկայացնում են

- Անգլերենի իմացության հավաստագիր (TOEFL կամ IELTS, բացակայության դեպքում կիրականացվի անգլերենի իմացության ստուգում):

Ուսանողների ընտրության չափանիշներն են՝ առաջադիմությունը, ուսումնառության լեզվի իմացությունը և հետաքրքրվածությունը:

Մրցույթն անցկացվելու է հարցազրույցի տարբերակով: Մրցույթի անցկացման օրը կտեղեկացվի փաստաթղթերի ամբողջական փաթեթը ներկայացրած ուսանողներին:

Հարցերի դեպքում կարող եք դիմել միջազգային կապերի վարչություն (հեռ.՝ 010580177)